

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱԿՈՐՅԱՆ ԿԱՐԵՆ ՎԱՀԱՆԻ

ԱՆՁԻ ՊԱՏՇԱՀ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ԺԲ.00.02 – «Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2018

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АКОПЯН КАРЕН ВАГАНОВИЧ

ПРАВО ЛИЦА НА НАДЛЕЖАЩЕЕ АДМИНИСТРИРОВАНИЕ В КОНТЕКСТЕ
КОНСТИТУЦИОННО-ПРАВОВЫХ РЕГУЛИРОВАНИЙ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 – “Публичное право – конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление”

ЕРЕВАН - 2018

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ս. Վ. Մուրադյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ն. Ա. Այվազյան

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ. Ա. Ենգոյան

Առաջատար կազմակերպություն՝

Հայ-ռուսական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018 թվականի հունիսի 26-ին, ժամը 11⁰⁰-ին ՀՀ ԲՈՀ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (Երևան – 0025, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2018 թվականի մայիսի 25-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական

քարտուղար՝ իրավ. գիտ. թեկ., դոցենտ

Ա. Ա. Մանասյան

Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете

Научный руководитель:

кандидат юридических наук, доцент С. В. Мурадян

Официальные оппоненты:

доктор юридических наук, профессор Н. А. Айвазян

кандидат юридических наук, доцент А. А. Енгоян

Ведущая организация:

Российско-Армянский университет

Защита диссертации состоится 26-ого июня 2018 г. в 11⁰⁰ часов на заседании Специализированного совета ВАК РА 001 по юриспруденции при Ереванском государственном университете (Ереван - 0025, Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Ереванского государственного университета.

Автореферат разослан 25-ого мая 2018 года.

Ученый секретарь специализированного

совета: кандидат юридических наук, доцент

А. А. Манасян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արենախոսության թեմայի արդիականությունը: Ժամանակակից իրավական պետության պայմաններում վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեությունը՝ վարչարարությունը, պետք է օժտված լինի այնպիսի որակական հատկանիշներով, որոնք կապահովեն, մի կողմից, այդ գործունեության արդյունավետությունը, իսկ մյուս կողմից՝ մասնավոր անձանց և հանրային իշխանության միջև ծագող հարաբերություններում ֆիզիկական և իրավաբանական անձանց հիմնական իրավունքների երաշխավորված իրացումը և պաշտպանությունը: Այդպիսի որակական հատկանիշներին համապատասխանող հանրային իշխանության արտաքին ներգործություն ունեցող կառավարչական գործունեությունն ընդունված է անվանել պատշաճ վարչարարություն: Պատշաճ վարչարարությունն ամենաընդհանուր բնորոշմամբ վարչական մարմինների կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության, ինչպես նաև մի շարք այլ հիմնարար սկզբունքների պահովումն է, որոնք բխում են իրավունքի գերակայության հայեցակարգից:

Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականին տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունների արդյունքում իրավական պաշտպանության կառուցակարգերի շարքում գործադիր գործառույթներով օժտված հանրային իշխանության մարմինների կողմից իրենց լիազորությունների իրականացման ընթացքում անաչառության, արդարության, ինչպես նաև իրավունքի գերակայությունից բխող մյուս չափանիշների պահպանումը ստացել է առաջնային նշանակություն և ձևակերպվել է պատշաճ վարչարարության իրավունքի՝ որպես մարդու ինքնուրույն հիմնարար իրավունքի, տեսքով:

Պատշաճ վարչարարության իրավունքը, որը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգ է ներմուծվել 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածով, իրավակիրառ պրակտիկայում դեռևս չի ստացել իր համարժեք ընկալումն ու կիրառությունը, ինչն առաջացնում է այդ հիմնարար իրավունքի տարբեր կողմերն ընդգրկող հիմնախնդիրներն ուսումնասիրելու օբյեկտիվ անհրաժեշտություն: Պատշաճ վարչարարության իրավունքի իրացման և պաշտպանության հիմնախնդիրների վերաբերյալ համարժեք գիտական հիմքերի բացակայության պայմաններում հնարավոր չէ ապահովել համակարգված ու կանխատեսելի վարչարարության գոյությունը, ինչպես նաև լիարժեք կերպով հաղթահարել իրավակիրառ, այդ թվում նաև՝ դատական, պրակտիկայում գործնականում հաճախակի ծագող խնդրահարույց իրավիճակները: Ըստ այդմ, 2015 թվականին տեղի ունեցած սահմանադրական փոփոխություններից բխող նոր իրո-

ղությունների պայմաններում անհրաժեշտություն է առաջանում համալիր կերպով գիտական ուսումնասիրության ենթարկել պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի էությունն ու բովանդակությունը և մշակել այդ հիմնարար իրավունքի երաշխավորված կենսագործման ու պաշտպանության հիմնախնդիրներին վերաբերող տեսական մոտեցումներ ու հայեցակարգային չափանիշներ՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ վարչարարությանն առնչվող իրավունքների և ազատությունների իրացման ու պաշտպանության համար գործուն կառուցակարգերի ստեղծման, ինչպես նաև վարչարարության արդյունավետության ամրապնդման նպատակով:

Վերոգրյալն ամբողջությամբ բնութագրում է սույն աշխատանքի թեմայի արդիականությունն ու հետազոտության անհրաժեշտությունը:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը: Պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի համալիր ուսումնասիրությանն առնչվող գիտական հետազոտությունները խորհրդային և ռուսական գրականությունում բացակայում են:

Փոխարենը, պատշաճ վարչարարության իրավունքն առանձին առումներով ուսումնասիրվել է եվրոպացի հետազոտողների կողմից, որոնք այն դիտարկում են որպես Եվրոպական միության իրավական համակարգում մարդու ինքնուրույն հիմնարար իրավունք: Պատշաճ վարչարարության իրավունքին նվիրված այդպիսի հետազոտությունների շարքում կարելի է առանձնացնել հատկապես Բուկուրա Միհաեսկու Էվանսի (*Bucura C. Mihaescu Evans*), Հանս Փիթեր Նեյլի (*Hanns Peter Nehl*), Հերվիգ Հոֆմանի (*Herwig C. H. Hofmann*), Ջիլ Ուեյքֆիլդի (*Jill Wakefield*), Ժուլի Դյուպոն-Լասալի (*Julie Dupont-Lassalle*) և այլոց աշխատությունները:

Մինչդեռ քննարկվող հիմնարար իրավունքը համալիր կերպով հայրենական իրավաբանական գրականության մեջ դեռևս ուսումնասիրված չէ, և դրա վերաբերյալ համալիր գիտական աշխատությունները բացակայում են: Նշված իրավիճակը հիմնականում պայմանավորված է այն իրողությամբ, որ պատշաճ վարչարարության իրավունքը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգ է ներմուծվել միայն 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում, իսկ մեր երկրի գիտական միտքը դեռ չի հասցրել համալիր կերպով հետազոտության ենթարկել այն:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը պատշաճ վարչարարության իրավունքի կենսագործման և պաշտպանության ոլորտում ծագող հասարակական հարաբերություններն են: Հետազոտության առարկան պատշաճ վարչարարության սուբյեկտիվ իրավունքի էությունը, բովանդակությունը, կառուցվածքային տարրերն են, ինչպես նաև այդ իրավունքի իրացման և պաշտպանության հիմնախնդիրները:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպա-

տակը պատշաճ վարչարարության իրավունքի իրացման և պաշտպանության ոլորտի տեսական և գործնական հիմնախնդիրների համալիր գիտական ուսումնասիրության արդյունքում Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում հիշյալ հիմնարար իրավունքի երաշխավորված իրացման և պաշտպանության համար անհրաժեշտ իրավաբանական կառուցակարգերի մշակումն է, ինչպես նաև առկա կառուցակարգերի կատարելագործումը:

Նշված նպատակին հասնելու համար սույն ատենախոսությամբ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1) պարզել պատշաճ վարչարարության էությունը և բնորոշ գծերը, ինչպես նաև բացահայտել պատշաճ վարչարարության իրավունքի հասկացությունը, կիրառության շրջանակներն ու կարգավորման նպատակը,

2) հստակեցնել պատշաճ վարչարարության իրավունքի հասկացության ծավալում ներառվող բաղադրիչների կազմը և մշակել այս կամ այն սուբյեկտիվ իրավունքը կամ սկզբունքը պատշաճ վարչարարության իրավունքի բովանդակության մեջ ներառելու չափանիշները,

3) արդյունավետ ուսումնասիրության նպատակով պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրիչները ենթարկել հստակ դասակարգման,

4) վերհանել պատշաճ վարչարարության իրավունքի օրգանական բաղադրիչի՝ «հոգատարության սկզբունքի», էությունը, բացահայտել դրանում ներառվող՝ ֆիզիկական ու իրավաբանական անձանց առնչվող գործերի անաչառ, արդարացի ու ողջամիտ ժամկետում քննության իրավունքների բովանդակությունը, մշակել նոր մոտեցումներ դրանց իրացման և պաշտպանության կառուցակարգերի վերաբերյալ,

5) բացահայտել պատշաճ վարչարարության իրավունքի ընթացակարգային բաղադրիչների՝ վարչական վարույթի ընթացքում լսված լինելու, փաստաթղթերին ծանոթանալու և հիմնավորված վարչական ակտ ստանալու իրավունքների էությունը, բովանդակությունը, կիրառության սահմանները, ինչպես նաև մշակել նոր մոտեցումներ դրանց իրացման և պաշտպանության կառուցակարգերի վերաբերյալ,

6) կատարված հետազոտության արդյունքների հիման վրա ներկայացնել Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում պատշաճ վարչարարության իրավունքի երաշխավորված իրացումն ու պաշտպանությունն ապահովելուն ուղղված առաջարկություններ՝ իրավակիրառ պրակտիկայի և գործող օրենսդրության զարգացման հիմնական ուղղությունների ու դրանց կատարելագործման վերաբերյալ:

Հեղազոտության փեսական հիմքը: Հետազոտության տեսական հիմքը պատշաճ վարչարարության իրավունքին առնչվող հայրենական և արտասահմանյան աղբյուրներն են: Դրանց շարքում կարելի է հատկապես ա-

ռանձնացնել Գևորգ Դանիելյանի, Բուկուրա Միհաեսկու Էվանսի (*Bucura C. Mihaescu Evans*), Հանս Փիթեր Նեյլի (*Hanns Peter Nehl*), Հերվիգ Հոֆմանի (*Herwig C. H. Hofmann*), Ջիլ Ուեյքֆիլդի (*Jill Wakefield*), Ջուլի Պոնցե Սոլեի (*Juli Ponce Solé*), Յուրգեն Շվարցեի (*Jürgen Schwarze*), Կլարա Կանսկայի (*Klara Kanska*), Փոլ Քրեյգի (*Paul Craig*), Քսավիեր Գրուսոյի (*Xavier Groussot*), Ժուլի Դյուպոն-Լասալի (*Julie Dupont-Lassalle*) և այլոց աշխատությունները:

Հեղազոտության իրավական և փորձառական հիմքը: Հետազոտության իրավական և փորձառական հիմքը հետևյալն է. պատշաճ վարչարարության իրավունքին առնչվող Հայաստանի Հանրապետության ու արտասահմանյան երկրների նորմատիվ իրավական ակտերը, Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության մարմինների կողմից ընդունված իրավական ակտերը, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի և ՀՀ վարչական դատարանի դատական ակտերը, Մարդու իրավունքներ եվրոպական դատարանի և Եվրոպական միության դատարանի դատական ակտերը, որոնք առնչվում են պատշաճ վարչարարության իրավունքի իրացման ու պաշտպանության հիմնախնդիրներին:

Հեղազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտության նպատակից ելնելով՝ կիրառվել են ինչպես համընդհանուր գիտական՝ *դիալեկտիկական, պայմական, լեզվադրամաբանական* ու համատեսական՝ *ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի, սինթեզի* մեթոդները, այնպես էլ մասնագիտական (իրավաբանական)՝ *համակարգակառուցվածքային, իրավահամեմատական, ձևական-իրավաբանական* մեթոդները:

Հեղազոտության գիտական նորույթը: Հետազոտության գիտական նորույթն այն է, որ հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ հնարավորինս բազմակողմանի և համալիր ուսումնասիրության արդյունքում վերհանվել են պատշաճ վարչարարության իրավունքի էությունն ու բովանդակությունը և ներկայացվել են այդ հիմնարար իրավունքի երաշխավորված իրացումն ու պաշտպանությունն ապահովելուն ուղղված նոր գաղափարներ ու առաջարկություններ: Ատենախոսությամբ հատկապես կարևորվել է պատշաճ վարչարարության իրավունքի բոլոր բաղադրիչների էական հատկանիշների և իրացման կառուցակարգերի հետազոտումը՝ հայրենական իրավաբանական գրականությունում առաջին անգամ համակարգային տեսքով ուսումնասիրելով այդ բաղադրատարրերից յուրաքանչյուրի կենսագործման հիմնախնդիրները և մշակելով դրանց լուծման համար անհրաժեշտ տեսական ու գործնական նշանակություն ունեցող նոր մոտեցումներ: Բացի այդ, ատենախոսությամբ հետազոտվել ու բնութագրվել են պատշաճ վարչարարության իրավունքի կիրառության ոլորտին առնչվող այնպիսի հայեցակարգային դրույթներ, տեսական հասկացություններ ու եզրույթներ, որոնք

մինչ այժմ հայտնի չեն եղել հայ իրավագիտական մտքին:

Ատենախոսության գիտական նորույթն առաջին հերթին արտացոլված է պաշտպանության ներկայացվող դրույթներում, ատենախոսության եզրակացությունում կատարված տեսական ընդհանրացումներում և առաջարկներում:

Պաշտպանության ներկայացվող դրույթները: Ատենախոսության պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները հանգում են հետևյալին.

1. Պատշաճ վարչարարության էությունը վարչարարության ոլորտում մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորված իրացման ու պաշտպանության և վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեության արդյունավետության ապահովման գործառույթների միաժամանակյա ապահովումն ու դրանց միջև փոխադարձ հավասարակշռվածության հաստատումն է: Պատշաճ վարչարարության իրավունքը համընդգրկուն իրավական ինստիտուտ է, որը բովանդակում է մի շարք սուբյեկտիվ իրավունքներ, իրավական երաշխիքներ ու սկզբունքներ և վարչարարությանը ներկայացվող որակական չափանիշներ, որոնք ուղղված են մի կողմից ֆիզիկական ու իրավաբանական անձանց՝ վարչարարության հետ առնչվող իրավունքների, ազատությունների և օրինական շահերի երաշխավորված իրացմանն ու պաշտպանությանը, իսկ մյուս կողմից՝ վարչարարության արդյունավետության ապահովմանը:

2. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից պատճառված վնասների հատուցման իրավունքը, որոշակի փոխհարաբերակցության մեջ գտնվելով պատշաճ վարչարարության իրավունքի հետ, չի ընդգրկվում այդ սահմանադրական իրավունքի բովանդակության մեջ և չի կարող համարվել դրա տարրերից մեկը: Վնասների հատուցման իրավունքը չունի պատշաճ վարչարարության իրավունքի տարրերին բնորոշ հատկանիշները. այն չի առնչվում վարչական մարմինների և ֆիզիկական ու իրավաբանական անձանց միջև ծագող իրավահարաբերությունների շրջանակներում տեղի ունեցող վարչական ընթացակարգերի որակական հատկանիշներին, վարչարարությանը որևէ նոր որակ չի հաղորդում և կենսագործվում է միայն վարչարարության ավարտից հետո և, որպես կանոն, տվյալ վարչարարության արդյունքում մարդու հիմնարար իրավունքների խախտումներ թույլ տրված լինելու փաստի ուժով:

3. Վարչական վարույթն իրականացնող պաշտոնատար անձանց բացարկի (ինքնաբացարկի) ինստիտուտը՝ որպես վարչական մարմինների կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց առնչվող գործերի անաչառ քննության իրավունքի պաշտպանության երաշխիք, կենսագործվում է՝ հիմք ընդունելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից

ձևավորված՝ անկողմնակալության օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշները, և պետք է կիրառելի լինի բոլոր վարչական մարմինների, այդ թվում նաև՝ կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովների համար: Ընդ որում, եթե կոլեգիալ վարչական մարմնի մի քանի անդամների վերաբերյալ բացարկի (ինքնաբացարկի) հիմքերի առկայության պայմաններում այդ պաշտոնատար անձանց կողմից գործը քննող վարչական մարմնի կազմից միաժամանակյա դուրս գալու դեպքում այն կարող է գրկվել տվյալ գործը քննելու և որոշում կայացնելու իրավազորությունից, ապա անհրաժեշտ է գնահատել կոլեգիալ վարչական մարմնի անդամներից յուրաքանչյուրի՝ տվյալ գործով կողմնակալության փաստական հիմքերը և վարչական մարմնի կազմում թողնել այն պաշտոնատար անձին, որի կողմնակալության հիմքը նվազ նշանակություն ունի կոլեգիալ մարմնի մյուս անդամների համեմատությամբ, ինչը հնարավորություն կտա պահպանել վարչական մարմնի իրավազորությունը և արդյունավետորեն քննել ու լուծել այդ մարմնի իրավասությանը վերապահված գործը:

4. Վարչական մարմինների կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց առնչվող գործերի արդարացի քննության իրավունքը լրացնում է պատշաճ վարչարարության իրավունքի բովանդակությունը ՀՀ Սահմանադրությամբ առանձնահատուկ կերպով չնախատեսված որոշակի այլ որակներով ու սկզբունքներով, որոնցից են, մասնավորապես, վարչական վարույթին արդյունավետ մասնակցության, «զենքերի հավասարության» (*“equality of arms”*), անմեղության կանխավարկածի, իրավական որոշակիության սկզբունքները, ինչպես նաև վարչական վարույթում ապացուցման կանոնները: Վարչարարության ընթացքում նշված սկզբունքների ու կանոնների անտեսումը կամ ոչ պատշաճ երաշխավորումը հանգեցնում է պատշաճ վարչարարության իրավունքի խախտման, քանի որ այդ պարագայում վարչարարությունն իր ամբողջականության մեջ չի համապատասխանում նշված հիմնարար իրավունքի պահանջներին՝ անկախ դրա մյուս բաղադրիչների խախտումների առկայության կամ բացակայության հանգամանքից:

5. ՀՀ օրենսդրությամբ վարչական վարույթի ընթացիկ և եզրափակիչ փուլերի համար առանձին առավելագույն ժամկետներ սահմանված չլինելու պայմաններում հնարավոր է այնպիսի իրավիճակի առաջացում, երբ վարչական մարմինը գործնականում չունի ողջամիտ ժամանակ՝ վարչական մարմինների կողմից վարչական գործի փաստական հանգամանքները լրիվ և բազմակողմանի քննարկելու և հիմնավորված վարչական ակտ կայացնելու (կազմելու) համար: Այդ խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է նախատեսել վարչական վարույթի ընթացիկ և եզրափակիչ փուլերի համար առանձին առավելագույն ժամկետներ, որոնք վարչական վարույթի ընդհանուր տևողության առավելագույն ժամկետի հետ մեկտեղ կարող են ապահովել ֆիզիկա-

կան և իրավաբանական անձանց առնչվող գործի՝ ողջամիտ ժամկետում քննության իրավունքի երաշխավորված իրացումը: Նշված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է օրենսդրորեն սահմանել վարչական վարույթը եզրափակող վարչական ակտը միայն գործի փաստական հանգամանքների քննարկումն ավարտելուց հետո՝ որոշակի կոնկրետ ժամկետում (օրինակ՝ եւրոյա ժամկետում), ընդունելու պահանջ:

6. Թեև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածով նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունքը (*“the right of access to documents”*) և պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրիչ հանդիսացող՝ վարչական վարույթի ընթացքում փաստաթղթերին ծանոթանալու իրավունքը (*“the right of access to the file”*) սերտորեն փոխկապակցված են միմյանց հետ, սակայն տարբերվում են իրենց գործառնության շնչանակությամբ, ծավալային առումով չեն ներառվում մեկը մյուսի մեջ և միմյանց հետ չեն հարաբերակցվում որպես ամբողջը մասի հետ: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունքը չունի պատշաճ վարչարարության իրավունքի տարրերին բնորոշ հատկանիշները և պատշաճ վարչարարության հիմնարար իրավունքի բաղադրատարր չէ:

7. Հիմնավորված վարչական ակտ ստանալու իրավունքը պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի կարևորագույն բաղադրատարրերից մեկն է. այն ենթադրում է, որ վարչական վարույթի մասնակիցների իրավական վիճակի նկատմամբ միջամտող ազդեցություն ունեցող բոլոր գրավոր վարչական ակտերը պետք է պարունակեն կամ ունենան պատշաճ հիմնավորում: Հիմնավորված վարչական ակտ ստանալու իրավունքը բխում է պատշաճ վարչարարության էությունից և պետք է ստանա իր առանձնահատուկ սահմանադրաիրավական ամրագրումը՝ որպես պատշաճ վարչարարության իրավունքի ինքնուրույն բաղադրիչ:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության տեսական նշանակությունն այն է, որ սույն ատենախոսությամբ հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ ուսումնասիրության առարկա են դարձել պատշաճ վարչարարության իրավունքի էությունը, բովանդակությունը, կիրառության սահմաններն ու դրա առանձին բաղադրիչների հիմնական հատկանիշները: Այսինքն՝ սույն ատենախոսությամբ պատշաճ վարչարարության իրավունքի վերաբերյալ մշակվել են հայեցակարգային մոտեցումներ, որոնք կարող են հիմք հանդիսանալ հետագա գիտական ուսումնասիրությունների համար:

Հետազոտության գործնական նշանակությունն այն է, որ սույն ատենախոսության ուսումնասիրություններն ու դրանց արդյունքները կարող են կիրառվել ինչպես իրավաստեղծ գործունեության մեջ, հատկապես՝ վարչարարության և վարչական վարույթի հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող նորմատիվ ակտերի մշակման ընթացքում, այնպես էլ հանրային իշխանության մարմինների, հատկապես՝ վարչական մարմինների և դատարանների, իրավակիրառ պրակտիկայում: Բացի այդ, սույն ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել այն ուսումնական դասընթացների շրջանակներում, որոնց առարկան որևէ կերպ առնչվում է գործադիր իշխանության մարմինների կառավարչական գործունեությանը, վարչարարությանը և վարչական վարույթին:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնում: Ատենախոսության տեսական ընդհանրացումները, եզրահանգումներն ու առաջարկություններն արտացոլված են հեղինակի կողմից իրապարակված գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել ամսագրերում և գիտական ժողովածուներում: Ատենախոսության մի շարք հիմնադրույթներ ներկայացվել են նաև ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում կազմակերպված գիտաժողովներում:

Արեւնախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, դրանցում ընդգրկված ինը պարագրաֆից, եզրակացությունից, օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

ԱՏԵՆԱՒՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հեղինակը հիմնավորում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացնում է թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության տեսական, նորմատիվ և փորձառական հիմքերը, մեթոդաբանությունը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, ձևակերպում է պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, արտացոլում է հետազոտության տեսական ու գործնական նշանակությունը և հետազոտության արդյունքների փորձարկումը:

Առաջին գլուխը՝ «Պատշաճ վարչարարության իրավունքի հասկացությունը և էությունը» վերլուծությամբ, բաղկացած է երկու պարագրաֆից:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ «Պատշաճ վարչարարության էությունը և ընդհանուր բնութագիրը» վերլուծությամբ, հեղինակն ուսումնասիրում է պատշաճ վարչարարության ձևավորման հիմքում ընկած հայեցա-

կարգային գաղափարները և դրանց իրավական ամրագրման էվոլյուցիան, ինչպես նաև բացահայտում է այս իրավաբանական երևույթի էությունը, դերն ու գործառնության շնանակությունը պետության իրավական համակարգում:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Պատշաճ վարչարարության իրավունքի հասկացությունը և կառուցվածքը» վերաբերում է, հեղինակն անդրադառնում է պատշաճ վարչարարության հիմնարար իրավունքի հասկացության բնորոշման, այդ իրավունքի կիրառության շրջանակների և դրա բովանդակության մեջ առանձին սուբյեկտիվ իրավունքների ընդգրկման հիմնախնդիրներին: Հեղինակն առաջարկում է պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրիչները պայմանականորեն դասակարգել երկու խմբի՝ «օրգանական» (գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունքները) և «ընթացակարգային» (լաված լինելու, փաստաթղթերին ծանոթանալու, հիմնավորված վարչական ակտ ստանալու իրավունքները): Բացի այդ, հեղինակը գտնում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից պատճառված վնասների հատուցման իրավունքը չի կարող համարվել պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրիչ:

Երկրորդ գլխի 1-րդ պարագրաֆում՝ «Պատշաճ վարչարարության իրավունքի օրգանական բաղադրարարները» վերաբերում է չորս պարագրաֆի:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ ««Հոգատարության սկզբունք» հասկացությունը և էությունը» վերաբերում է, հեղինակը վերհանում է որպես պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի օրգանական բաղադրիչ հանդիսացող «հոգատարության սկզբունքի» (*“the principle of care”*) էությունը և առանձնահատկությունները՝ նշված հասկացությունը դիտարկելով լայն և նեղ առումներով: Հեղինակը նշում է, որ նեղ առումով «հոգատարության սկզբունքը» հանգում է գործի փաստական հանգամանքները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ կերպով պարզելու վարչական մարմնի պարտականությանը: Այնուհետև հեղինակը վերլուծում է լայն առումով «հոգատարության սկզբունքի» մեջ ներառվող «ջանադրության» ու «մտահոգության» սկզբունքները: Հեղինակը հիմնավորում է, որ «ջանադրության սկզբունքը» (*“the principle of diligence”*) դրսևորվում է վարչական մարմինների՝ արագ գործելու պարտականության տեսքով, իսկ «մտահոգության սկզբունքը» (*“the principle of solicitude”*) կոչված է հաստատելու ողջամիտ հավասարակշռություն վարչական մարմինների և հանրային ծառայողների փոխադարձ իրավունքների և պարտականությունների միջև:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Գործի անաչառ քննության իրավունքը» վերաբերում է, հեղինակն առաջարկում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից մշակված անկողմնակալության օր-

յեկտիվ և սուբյեկտիվ չափանիշները ներդնել վարչարարության ոլորտում ծագող իրավակիրառ պրակտիկայի հիմքում: Այնուհետև հեղինակն անդրադառնում է կոլեգիալ վարչական մարմնի պաշտոնատար անձանց նկատմամբ բացարկի (ինքնաբացարկի) կիրառման առանձնահատկություններին: Հեղինակը եզրահանգում է, որ նշված ինստիտուտը պետք է կիրառելի լինի առանց բացառության բոլոր վարչական մարմինների, այդ թվում նաև՝ կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովների նկատմամբ: Բացի այդ, հեղինակը որոշակի լուծում է առաջարկում կոլեգիալ վարչական մարմնի անդամների վերաբերյալ բացարկի (ինքնաբացարկի) հիմքերի միաժամանակյա առկայության դեպքում այդ վարչական մարմնի իրավագրության պահպանման ուղղությամբ:

Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Գործի արդարացի քննության իրավունքը» վերաբերում է, հեղինակն առաջ է քաշում այն տեսակետը, որ ֆիզիկական և իրավաբանական անձանց առնչվող գործերի արդարացի քննության իրավունքը, մի կողմից, հնարավորություն է ընձեռում գնահատելու վարչարարության իրավաչափությունն իր ամբողջականության մեջ, իսկ մյուս կողմից՝ լրացնում է պատշաճ վարչարարության իրավունքի բովանդակությունը մի շարք այլ իրավունքներով և ելակետային գաղափարներով, որոնցից են, մասնավորապես՝ վարչական վարույթին արդյունավետ մասնակցության իրավունքը, «գեների հավասարության» սկզբունքը, հիմնավորված վարչական ակտ ստանալու իրավունքը, անմեղության կանխավարկածը, ապացուցումը վարչական վարույթում, իրավական որոշակիության սկզբունքը և այլն: Այնուհետև հեղինակն անդրադառնում է նշված իրավական սկզբունքներից մի քանիսի բովանդակության մանրամասն ուսումնասիրությանը՝ կատարելով մի շարք եզրահանգումներ դրանց կիրառության առանձնահատկությունների վերաբերյալ:

Երկրորդ գլխի չորրորդ պարագրաֆում՝ «Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը» վերաբերում է, հեղինակը գտնում է, որ վարչարարության տևողության ողջամտությունը ենթակա է գնահատման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ հիմք ընդունելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ձևավորված չափանիշները: Միաժամանակ հեղինակը խնդրահարույց է համարում այն օրենսդրական կարգավորումը, որի համաձայն՝ վարչական վարույթի ընթացիկ և եզրափակիչ փուլերի տևողության համար առանձին առավելագույն ժամկետներ սահմանված չեն՝ ընդգծելով այդ ժամկետների նախատեսման անհրաժեշտությունը վարչական մարմինների կողմից գործի փաստական հանգամանքները լրիվ և բազմակողմանի քննարկելու ու հիմնավորված վարչական ակտ կայացնելու համար: Այնուհետև վերհանելով օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու հետևանքով վարչական ակտն

ընդունված համարվելու կառուցակարգի գործողության պայմանները՝ հեղինակը քննադատում է ՀՀ վճարելի դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները, որոնք ուղղված են նշված իրավական ինստիտուտի կիրառման շրջանակներն անհարկի սահմանափակելուն:

Երրորդ գլխի՝ «Պատշաճ վարչարարության իրավունքի ընթացակարգային բաղադրատարրերը» վերաբերում է բերք պարագրաֆից:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Լսված լինելու իրավունքը» վերաբերում է, որ վարչական վարույթի ընթացքում լսված լինելու իրավունքով օժտված են վարույթի այն մասնակիցները, այդ թվում նաև՝ երրորդ անձինք, ում իրավական կամ փաստական կարգավիճակը կարող է անբարենպաստ ազդեցության ենթարկվել վարույթի արդյունքում ընդունվելիք որոշմամբ՝ անկախ այն հանգամանքից, թե ով է սովյալ վարույթի հարուցումը նախաձեռնող սուբյեկտը: Այնուհետև հեղինակը քննարկման առարկա է դարձնում վարույթի ընթացքում բանավոր լուծմանը՝ որպես լսված լինելու իրավունքի իրացման հիմնական կազմակերպական կառուցակարգի, անցկացման բացառությունները: Միաժամանակ հեղինակն արտահայտում է այն դիրքորոշումը, որ վարչական վարույթում լսված լինելու իրավունքը չի սահմանափակվում միայն բանավոր լուծմանը մասնակցելու իրավունքով և կարող է ապահովվել նաև համապատասխան գրավոր ընթացակարգի միջոցով:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Փաստաթղթերին ծանոթանալու իրավունքը» վերաբերում է, հեղինակն ուսումնասիրում է վարչական վարույթի ընթացքում վարույթի մասնակիցներին վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու իրավունքի (*“the right of access to the file”*) երաշխավորված կենսագործման ու պաշտպանության հիմնախնդիրները և առաջ է քաշում մի շարք տեսական ու գործնական լուծումներ՝ այդ իրավունքի իրացման արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ: Նախ հեղինակն անդրադառնում է վարչական վարույթի ընթացքում փաստաթղթերին ծանոթանալու և պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու (*“the right of access to documents”*) իրավունքների փոխհարաբերության հարցին: Այնուհետև հեղինակը հիմնավորում է, որ վարչական վարույթի ընթացքում փաստաթղթերին ծանոթանալու իրավունքի երաշխավորված իրացումը ենթադրում է, որ վարչական մարմինը պարտավոր է յուրաքանչյուր վարչական վարույթի վերաբերյալ վարել առանձին գործ, իսկ նշված պարտականության չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումն ինքնին պետք է հիմք հանդիսանա այդ վարույթի ընթացքում ընդունված վարչական ակտն անվավեր ճանաչելու համար: Ավե-

լին, հեղինակը քննարկում է նաև փաստաթղթերին ծանոթանալու իրավունքի իրականացման կազմակերպական կառուցակարգերին առնչվող որոշ հիմնախնդիրներ:

Երրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Հիմնավորված վարչական ակտ ստանալու իրավունքը» վերաբերում է այն դիրքորոշումը, որ հիմնավորված վարչական ակտ ստանալու իրավունքը հանդիսանում է պատշաճ վարչարարության հիմնարար իրավունքի ինքնուրույն բաղադրատարր և պետք է ստանա իր առանձնահատուկ սահմանադրաիրավական ամրագրումը: Այնուհետև հեղինակը նշում է, որ բոլոր այն անհատական իրավական ակտերը, որոնք, հանրային շահի գերակայությունից ելնելով, չեն պարունակում փաստական հիմնավորումներ, կամ որոնց համար օրենսդրությամբ հատուկ նախատեսված է հիմնավորում չպարունակելու հնարավորություն, պետք է դուրս մնան վարչական ակտի հասկացության շրջանակներից և չհամարվեն վարչական ակտ: Բացի այդ, հեղինակը պնդում է, որ միջամտող ազդեցություն ունեցող գրավոր վարչական ակտի՝ չհիմնավորված կամ ոչ պատշաճ հիմնավորված լինելը, ընդհանուր կանոնի համաձայն, իրավակիրառ պրակտիկայում անպայմանորեն պետք է հանգեցնի այդ վարչական ակտի անվավերության:

Արեւնախոսության եզրակացությունում ի լրումն պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթների, կատարվում են մի շարք ընդհանրացումներ ու առաջարկություններ, որոնցից առավել կարևորները հանգում են հետևյալին.

1. Պատշաճ վարչարարության իրավունքի հասկացությունն ունի հավաքական բնույթ և կարող է նկարագրվել իր սահմանադրաիրավական բաղադրիչների միջոցով. այդ հիմնարար իրավունքն իր բաղադրիչներից տարբերվող ինքնուրույն բովանդակություն չունի և իրավական համակարգում իրավաբանական նշանակություն է ստանում միայն իր այս կամ այն բաղադրիչի շնորհիվ: Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրիչներն են (1) գործերի անաչառ քննության իրավունքը, (2) գործերի արդարացի քննության իրավունքը, (3) գործերի ողջամիտ ժամկետում քննության իրավունքը, (4) լսված լինելու իրավունքը, (5) փաստաթղթերին ծանոթանալու իրավունքը, ինչպես նաև (6) հիմնավորված վարչական ակտ ստանալու իրավունքը:

2. Թեև պատշաճ վարչարարության իրավունքի բովանդակությունը մեկընդմիջ տրված չէ և ժամանակի ընթացքում կարող է լրացվել նաև այլ բաղադրատարրերով, սակայն քննարկվող հիմնարար իրավունքի բովանդակության մեջ կարող են ընդգրկվել միայն այն հանրային սուբյեկտիվ իրավունքները կամ վարչարարության սկզբունքները, որոնք գոյություն ունեն և գործում են բացառապես հանրային իշխանության կառավարչական գործու-

ներության շրջանակներում, դուրս չեն գալիս այդ շրջանակներից և առանձին նախատեսված չեն Սահմանադրության այլ իրավանորմերով:

3. Իրավունքի գերակայության լույսի ներքո պատշաճ վարչարարության իրավունքի ուսումնասիրության և դրա բովանդակության ճիշտ ընկալման համար այդ հիմնարար իրավունքի բաղադրիչները պայմանականորեն կարելի է դասակարգել երկու խմբի՝ «օրգանական» և «ընթացակարգային»: Պատշաճ վարչարարության իրավունքի օրգանական բաղադրիչներն այդ իրավունքի «էական», «բնական», «անօտարելի», «առաջնային» տարրերն են, որոնք ներթափանցում են վարչարարության ողջ գործընթացի մեջ՝ սկզբից մինչև վերջ. դրանք են՝ գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունքները: Իսկ ընթացակարգային բաղադրիչներն ապահովում են ֆիզիկական և իրավաբանական անձանց արդյունավետ մասնակցությունը վարչական վարույթի բոլոր փուլերում՝ երաշխավորելով վարույթի մասնակիցներին վարչական մարմինների առջև իրավական պաշտպանության միջոցների տրամադրումն ու դրանց գործնական իրացումը. դրանք են՝ լաված լինելու իրավունքը, փաստաթղթերին ծանոթանալու իրավունքը, ինչպես նաև հիմնավորված վարչական ակտ ստանալու իրավունքը:

4. Պատշաճ վարչարարության իրավունքի օրգանական բաղադրիչների համակցությունը կազմում է «հոգատարության սկզբունքը» (*“the principle of care”*), որը դիտարկվում է լայն և նեղ առումներով: Նեղ իմաստով «հոգատարության սկզբունքը» բնութագրվում է որպես վարչական մարմիններին ներկայացվող՝ անաչառություն, զգոնություն, աչալրջություն և շրջահայեցություն ցուցաբերելու, յուրաքանչյուր կոնկրետ գործի հանգամանքների ի պաշտոնե (*“ex officio”*), բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկելու, վարույթի մասնակիցներին օգնություն ցուցաբերելու միջոցով արդարացի վարչարարություն դրսևորելու պահանջ: Լայն առումով «հոգատարության սկզբունքը» հանգում է յուրաքանչյուր անձի՝ վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի ու ողջամիտ ժամկետում քննության իրավունքներին և իր մեջ ներառում է «ջանադրության» ու «մտահոգության» սկզբունքները:

5. «Ջանադրության սկզբունքը» (*“the principle of diligence”*) Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում դրսևորվում է վարչական մարմինների՝ արագ գործելու պարտականության տեսքով. նշված սկզբունքի և նեղ իմաստով «հոգատարության սկզբունքի» միջև հակասության առաջացման դեպքում նախապատվությունը պետք է տրվի վարչական մարմնի՝ գործի փաստական հանգամանքները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ կերպով պարզելու պարտականության պահպանմանը, բացառությամբ այն դեպքի, երբ գործի փաստական հանգամանքների պարզաբանումն իրավունքի ուժով արդեն իսկ առկա է, այսինքն՝ վարչական ակտի ըն-

դունումը սահմանափակվում է միայն եզրափակիչ փուլով և կանխորոշված է օրենքով:

6. «Մտահոգության սկզբունքը» (*“the principle of solicitude”*) կոչված է հաստատելու ողջամիտ հավասարակշռություն վարչական մարմինների և հանրային ծառայողների փոխադարձ իրավունքների և պարտականությունների միջև. այն որոշակիորեն ընդլայնում է պատշաճ վարչարարության իրավունքի սահմանները՝ անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության չափանիշները տարածելով նաև վարչական մարմինների և այդ մարմիններում ծառայող պաշտոնատար անձանց հարաբերությունների վրա:

7. Վարչական վարույթում ապացուցման գործընթացը պետք է համապատասխանի պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի բաղադրիչ հանդիսացող գործի արդարացի քննության սկզբունքի պահանջներին, որոնք հանգում են հետևյալին. վարչական մարմինների կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց առնչվող յուրաքանչյուր գործով ապացուցման առարկան կազմող բոլոր փաստերի առկայությունը կամ բացակայությունը պետք է հաստատվի թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների բավարար համակցությամբ:

8. Իրավական որոշակիության սկզբունքը պատշաճ վարչարարության իրավունքի համատեքստում դրսևորվում է վարչական մարմինների կողմից ընդունված և ուժի մեջ մտած որոշումների պարտադիրության *res judicata* սկզբունքի տեսքով, որի բովանդակությունը հանգում է հետևյալին. առջինն չհանդիսացող և անբողոքարկելի դարձած վարչական ակտը պարտադիր է բոլորի համար: Այդպիսի վարչական ակտը չի կարող փոփոխվել, անվավեր կամ ուժը կորցրած ճանաչվել այն ընդունած վարչական մարմնի կողմից, բացառությամբ օրենքով նախատեսված բացառիկ դեպքերի՝ հաշվի առնելով հանրային շահի և մասնավոր անձանց շահերի ողջամիտ հավասարակշռությունը:

9. Վարչական վարույթի տևողության ողջամտությունը ենթակա է գնահատման յուրաքանչյուր կոնկրետ գործով՝ ելնելով տվյալ գործի բովանդակությամբ և առանձնահատկություններով պայմանավորված մի շարք չափանիշներից: Այդ չափանիշներն են՝ գործի բարդությունը, ընդունվելիք որոշման կարևորությունը շահագրգիռ անձանց համար, վարույթին մասնակցող անձանց ու հանրային իշխանության մարմնի վարքագիծը և նրանց փոխհարաբերությունների բնույթը, որոնք վճռորոշ նշանակություն ունեն ցանկացած իրավաբանական ընթացակարգի, այդ թվում նաև՝ վարչարարության, տևողության ողջամտությունը որոշելու համար:

10. Ողջամիտ ժամկետում վարչական գործի քննության իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց է օրենքով սահմանված ժամկետում

վարչական ակտ չընդունվելու հետևանքով վարչական ակտն ընդունված համարվելու իրավաբանական ֆիկցիան, որը պայմանավորված չէ հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափության հանգամանքով և երաշխավորվում է վարչական դատավարության իրավունքում նախատեսված հատուկ հայցատեսակի միջոցով:

11. Թեև վարչական վարույթում լաված լինելու իրավունքի իրականացման գլխավոր կազմակերպական կառուցակարգը վարչական վարույթի ընթացքում անցկացվող լուսմների հնարավորությունն է, սակայն լաված լինելու սահմանադրական իրավունքն իր ծավալով չի համընկնում վարչական վարույթի ընթացքում բանավոր լուսմների մասնակցելու վարչական վարույթի մասնակիցների իրավունքին և կարող է ապահովված համարվել նաև այն դեպքում, երբ վարչական մարմինը վարույթի մասնակիցներին ընձեռում է գործի համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների վերաբերյալ իրենց դիրքորոշումները գրավոր ընթացակարգով արտահայտելու իրական հնարավորություն՝ ընդունելով և քննարկելով դրանք:

12. Վարչական վարույթի ընթացքում փաստաթղթերին ծանոթանալու իրավունքը (*"the right of access to the file"*) ենթադրում է, որ վարչական մարմինը պարտավոր է յուրաքանչյուր վարչական վարույթի վերաբերյալ համակարգված ու բարեխիղճ կերպով վարել առանձին գործ, որտեղ պետք է պահվեն տվյալ վարույթին առնչվող բոլոր փաստաթղթերը: Մինչդեռ նշված պահանջը Հայաստանի Հանրապետության իրավակիրառ պրակտիկայում չի ստացել իր համարժեք ընկալումն ու կիրառությունը: Այս խնդրահարույց իրավիճակը կարող է լուծվել այն դեպքում, եթե դատական պրակտիկան ընթանա այն ուղղությամբ, որ վարչական վարույթի վերաբերյալ գործը պատշաճ կերպով վարելու՝ վարչական մարմինների պարտականության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման յուրաքանչյուր դեպքում այդ վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտը ճանաչվի անվավեր՝ պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի խախտմամբ ընդունված լինելու հիմքով:

13. Հիմնավորված վարչական ակտ ստանալու իրավունքը ենթադրում է վարույթի մասնակիցների իրավական վիճակի նկատմամբ միջամտող ազդեցություն ունեցող գրավոր վարչական ակտում այն ընդունելու համար հիմք հանդիսացող բոլոր էական իրավական և փաստական հանգամանքները նշելու և համապատասխան փաստաթղթերին հղում կատարելու՝ վարչական մարմինների պարտականության առկայությունը: Վարչական վարույթի մասնակիցների իրավական վիճակի նկատմամբ միջամտող ազդեցություն ունեցող բոլոր գրավոր վարչական ակտերը պետք է պարունակեն հիմնավորում, իսկ բոլոր այն անհատական իրավական ակտերը, որոնք, հանրային շահի գերակայությունից ելնելով, չեն պարունակում փաստական հիմ-

նավորումներ, կամ որոնց համար օրենսդրությամբ հատուկ նախատեսված է հիմնավորում չպարունակելու հնարավորություն, պետք է դուրս մնան վարչական ակտի հասկացության շրջանակներից և չհամարվեն վարչական ակտ՝ դրանից բխող իրավական հետևանքներով:

Արենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հեղուկալ հրապարակումներում.

1. Կարեն Հակոբյան, «Պատշաճ վարչարարության իրավունքի սահմանադրաիրավական հիմքերի բովանդակությունը և ձևավորման էվոլյուցիան», Դատական իշխանություն, թիվ 8-9 (206-207), Երևան, 2016, էջեր 4-11:

2. Կարեն Հակոբյան, «Գրավոր վարչական ակտերի հիմնավորման պահանջը՝ որպես պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրատարր», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016թ. նստաշրջանի նյութերի ժողովածու / ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ: Խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2017, էջեր 72-90:

3. Կարեն Հակոբյան, «Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը՝ որպես պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրատարր», Պետություն և իրավունք, թիվ 4 (78), Երևան, 2017, էջեր 48-59:

4. Կարեն Հակոբյան, «Փաստաթղթերին ծանոթանալու իրավունքը՝ որպես պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրատարր», Արդարադատություն, թիվ 2 (43), Երևան, 2018, էջեր 66-73:

5. Կարեն Հակոբյան, «Գործի անաչառ քննության իրավունքը՝ որպես պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրատարր», Հանրային կառավարում, թիվ 1-2, Երևան, 2018, էջեր 218-226:

6. Կարեն Հակոբյան, «Գործի արդարացի քննության իրավունքը՝ որպես պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրատարր», Պետություն և իրավունք, թիվ 1 (79), Երևան, 2018, էջեր 33-42:

7. Կարեն Հակոբյան, «Պատշաճ վարչարարության իրավունքի հասկացությունը և կառուցվածքը», Դատական իշխանություն, թիվ 3-4 (225-226), Երևան, 2018, էջեր 18-25:

8. Կարեն Հակոբյան, «Լաված լինելու իրավունքը՝ որպես պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրատարր», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, թիվ 1(1), Երևան, 2018, էջեր 54-70:

9. Կարեն Հակոբյան, ««Հոգատարության սկզբունքը»՝ որպես պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրատարր», Օրինականություն, թիվ 104, Երևան, 2018, էջեր 44-49:

**ПРАВО ЛИЦА НА НАДЛЕЖАЩЕЕ АДМИНИСТРИРОВАНИЕ В КОНТЕКСТЕ
КОНСТИТУЦИОННО-ПРАВОВЫХ РЕГУЛИРОВАНИЙ**

РЕЗЮМЕ

Диссертация посвящена изучению сути, содержания, а также проблем гарантированной реализации и защиты конституционного права человека на надлежащее администрирование.

Право на надлежащее администрирование (или право на хорошую администрацию), которое было включено в правовую систему Республики Армения в результате конституционных изменений 2015 года, еще не получило адекватного восприятия и применения в правовой практике. Более того, в отечественной юридической литературе отсутствуют комплексные исследования данного конституционного права. В условиях отсутствия адекватных научных основ, касающихся проблем осуществления и защиты права на надлежащее администрирование, невозможно обеспечить существование систематической и предсказуемой административной деятельности, а также полностью преодолеть практические проблемы в правоприминительной, в том числе в судебной, практике. Вышеупомянутое подчеркивает актуальность темы диссертации и значимость ее исследования.

Целью исследования является разработка новых и совершенствование существующих правовых механизмов, необходимых для гарантированного осуществления и защиты права на надлежащее администрирование в правовой системе Республики Армения с помощью всесторонних научных исследований соответствующих теоретических и практических вопросов.

Исследование основано на множестве отечественных и зарубежных научных источников, а также на ряде отечественных и иностранных правовых актов, касающихся права на надлежащее администрирование.

В рамках диссертации автор раскрывает понятие, сущность, характерные особенности, сферу применения и цель регулирования права на надлежащее администрирование. Автор уточняет критерии включения того или иного субъективного права или принципа в содержание права на надлежащее администрирование, а также классифицирует компоненты данного права для его эффективного изучения. Затем автор выявляет систему права на надлежащее администрирование и изучает содержание и пределы применения каждого его компонентов, а также разрабатывает

новые подходы к механизмам их реализации и защиты. Наконец, на основе результатов исследования автор дает теоретические и практические рекомендации для обеспечения гарантированного осуществления и защиты права на надлежащее администрирование в правовой системе Республики Армения.

Научная новизна диссертации заключается в том, что впервые в отечественной юриспруденции в результате всестороннего и комплексного исследования выявлены сущность и содержание права на надлежащее администрирование и представлены новые идеи и рекомендации для обеспечения гарантированной реализации и защиты этого фундаментального права. В диссертации особое значение придается изучению основных особенностей и механизмов реализации всех компонентов права на надлежащее администрирование. Автор впервые в отечественной юридической литературе исследует весь комплекс этих компонентов и разрабатывает новые теоретические и практические подходы к решению проблем их реализации и защиты. Кроме того, в диссертации изучены и охарактеризованы некоторые теоретические концепции и понятия в области применения права на надлежащее администрирование, которые до сих пор не были известны отечественной юридической науке.

Научная новизна диссертации в первую очередь отражена в положениях, выносимых на защиту, в теоретических обобщениях и рекомендациях, сделанных в заключении диссертации.

Диссертация имеет не только научное, но и практическое значение, поскольку результаты исследования могут использоваться в правотворческой деятельности, направленной на составление нормативных правовых актов, регулирующих правоотношения, связанные с административной деятельностью, а также составляют необходимую теоретическую основу для обеспечения эффективности правоприминительной деятельности административных органов и административных судов.

Диссертация подготовлена на кафедре конституционного права ЕГУ. Теоретические обобщения, выводы и основные положения диссертации отражены в научных статьях автора, опубликованных в журналах и научных сборниках. Ряд тезисов диссертации также был представлен на конференциях, организованных на юридическом факультете ЕГУ.

HAKOBYAN KAREN

**THE RIGHT OF AN INDIVIDUAL TO GOOD ADMINISTRATION IN THE
CONTEXT OF CONSTITUTIONAL REGULATIONS**

SUMMARY

The dissertation is devoted to the research of the essence, content, as well as the problems of guaranteed realization and protection of the constitutional human right to good administration.

The right to good administration, which was implemented in the legal system of the Republic of Armenia as a result of the constitutional amendments of 2015, has not yet achieved its adequate perception and application in legal practice. Moreover, there are no comprehensive studies of this constitutional right in the native legal literature. In the absence of adequate scientific frameworks concerning the problems of implementation and protection of the right to good administration, it is impossible to ensure the existence of systematic and predictable administration, as well as to completely overcome practical problems in administrative and judicial activity. The above emphasizes the actuality of the topic of the dissertation and the importance of its research.

The aim of the research is to develop new legal mechanisms and improve the existing ones, which are necessary to ensure the implementation and protection of the right to good administration in the legal system of the Republic of Armenia, through comprehensive scientific research of relevant theoretical and practical issues.

The research is based on a variety of native and foreign scientific sources, as well as on a number of national and foreign legal acts relating to the right to good administration.

In the frames of the dissertation, the author reveals the notion, concept, nature, specific features, the scope and purpose of regulation of the right to good administration. The author clarifies the criteria for including a particular subjective right or principle in the content of the right to good administration, and also classifies the components of this right with the purpose of its effective study. Then the author reveals the system of the right to good administration and analyzes the content and scope of each component, and also develops new approaches to the mechanisms for their implementation and protection. Finally the author gives theoretical and practical recommendations, based on the results of the study, for ensuring the guaranteed implementation and protection of the right to good administration in the legal system of the Republic of Armenia.

The scientific novelty of the dissertation is that the present contribution provides the utmost comprehensive and complex research of the essence and content of the right to good administration for the first time in the native jurisprudence and presents new ideas and recommendations to ensure the guaranteed realization and protection of this fundamental right. In the dissertation special attention is given to the study of the main features and mechanisms for the implementation of all components of the right to good administration. The author, for the first time in the native legal literature, examines the entire complex of these components and develops new theoretical and practical solutions to the issues arising during their implementation and protection process. Besides, some theoretical concepts and notions concerning the right to good administration, which have not been known to the native legal science until now, have been studied and characterized in the dissertation.

The scientific novelty of the dissertation is primarily reflected in the provisions brought to the defense, in theoretical generalizations and recommendations made in the conclusion of the dissertation.

The dissertation has not only scientific but also practical value, since the results of the research can be used in law-making activities aimed at drafting legal acts regulating administrative activity, and also constitute the necessary theoretical basis for ensuring the effectiveness of law enforcement activities of administrative authorities and administrative courts.

The dissertation is prepared in the Chair of Constitutional Law of YSU. Theoretical generalizations, conclusions and main provisions of the dissertation are reflected in the author's scientific articles published in journals and scientific collections. A number of dissertation theses is also presented at conferences organized at the Faculty of Law of YSU.